ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/79

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

Զարգարյան Արման Հովհաննեսի ներկայացուցիչ Ա. Հարությունյան (լիազորագիր՝ տրված 28.10.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում Զարգարյան Արման Հովհաննեսի կողմից 25.10.2021թ. ներկայացված և 26.10.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/79 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Զարգարյան Արման Հովհաննեսի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Զարգարյան Արման Հովհաննեսը (հետայսու՝ Ընկերություն) 25.10.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության կարիքների համար բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով հրատապ մեկ անձ

/այսուհետև նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «Սլացք» ՓԲԸ-ն, և «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ բոլոր մասնակիցների հայտերը համապատասխանում են ընթացակարգի հրավերի պահանջներին, բացառությամբ «Երվադա» ՍՊԸ-ի: Անհամապատասխանությունը կայանում է նրանում, որ այդ ընկերությունը չի ներկայացրել իրական շահառուների մասին տվյալները և ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը որոշել է առաջնորդվել ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 41-րդ կետով և «Երվադա» ՍՊԸ-ին տալ հնարավորություն շտկի իր հայտում թույլ տրված սխալները:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Երվադա» ՍՊԸ-ն 08.10.2021թ. շտկել է անհամապատասխանությունները:

Դրանից հետո գնահատող հանձնաժողովը համեմատելով մասնակիցների գնային առաջարկները որոշել էին 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

Այնուհետև՝ www. gnumner.am համացանցային կայքում 11.10.2021թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ /«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համանայն կիրառվում է հնգօրյա անգործության ժամկետ/:

Սակայն, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ցանկանում եմ տեղեկացնել, որ «Երվադա» ՍՊԸ կողմից ներկայացված շտկված հավելված 1.1 սխալ է ներկայացված, քանի որ ապրանքի ֆիրմային անվանում նշված թրթուրավոր տրակտոր, ապրանքային նշան և մակնիշ նշված ՎՏԳ-90, արտադրողի անվանում նշված ԱԳՐՈՄԱՇ ՍՆԱԲ ՍՊԸ, ՎԶԳՄ ՍՊԸ և ՌՈՒՍԵԿՍ ՊՈՐՏ ՍՊԸ կողմից արտադրվող ապրանքների և հրավերի տեխնիկական բնութագրերի միջև կան մի շարք անհամապատասխանություններ, վերը նշված արտադրողները չունեն բուլդոզեր ՎՏԳ-90 մակնիշի հրավերով սահմանված բնութագրով ապրանքներ:

Սակայն ՀՀ ՊՆ-ի գնահատող հանձնաժողովը քայլեր չի ձեռնարկել պարզելու համար նշված խնդիրը: Նման հարց ՀՀ ՊՆ-ի գնահատող հանձնաժողովի մոտ պետք է առաջացներ հիմնավոր կասկած այնքանով, որքանով որ հայտ ներկայացրած երեք մասնակիցների մեջ անտրամաբանակ ցածր գին է ներկայացրել հենց «Երվադա» ՍՊԸ,

ուստի հենց այդ հիմքով պետք է առաջանար հիմնավոր կասկած և կատարվեր համապատասխան ստուգումներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 67-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համասատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Գտնում ենք, որ վերոհիշյալ կետի չկիրառման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջներ, դրանք են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքները և ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 67-րդ կետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու՝ արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ. ...:

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ՀՄԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 07.10.2021 թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության արդյունքում կայացված «Երվադա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու, 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարելու արձանագրային որոշումները:

2. www. gnumner.am համացանցային կայքում 11.10.2021թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ՀՄԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կիրառելու ՀՀ կառավարության N 56-Ն որոշման 67-րդ կետի համապատասխան դրույթները:

Կից ներկայացվում է Զարգարյան Արման Հովհաննեսիի անձնագրի, բողոքի համար վճարված անդորրագրի և «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված հավելված 1.1 պատճենները»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.10.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը բողոքի վերաբերյալ 29.10.2021թ. թիվ ՊՆ/02/5799-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր 27.10.21թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/7615-2021 գրությամբ ներկայացված «ՀՀ ՊՆ-ՀՄԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում Արման Հովհաննեսի Զարգարյանի կողմից ներկայացված բողոքը (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/79, 25.10.2021թ.) հայտնում եմ հետևյալը.

Ներկայացված բողոքի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Երվադա» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ում նշված ՎՏԳ-90 մակնիշի տրակտորը չի արտադրվում նույն հավելվածում որպես արտադրողներ նշված ԱԳՐՈՄԱՇ ՄՆԱԲ ՍՊԸ-ի կամ ՎԶԳՄ ՍՊԸ-ի կամ ՌՈՒՍԵԿՍ ՊՈՐՏ ՍՊԸ-ի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Արման Հովհաննեսի Զարգարյանի բողոքով ներկայացված պահանջը անհիմն է, իսկ բողոքը ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.10.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «Սլացք» ՓԲԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Զարգարյան Արման Հովհաննեսը բողոքով վիճարկում է «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, մասնավորապես՝ հայտնելով, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված «Ագրոմաշ Սնաբ» ՍՊԸ, «ՎԶԳՄ» ՍՊԸ և «ՌՈՒՍԵԿՍ ՊՈՐՏ» ՍՊԸ-ի արտադրողները չունեն հրավերով սահմանված «ՎՏԳ-90» մակնիշի բնութագրով ապրանքներ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Զարգարյան Արման Հովհաննեսի կողմից ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.10.2021թ. թիվ ՊՆ/02/5799-2021 գրությունը, «ՀՀ

ՊՆ-ՀՄԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում

ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ՀՄԱՊՁԲ-21-20/5» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «Սլացք» ՓԲԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Զարգարյան Արման Հովհաննեսը բողոքով վիճարկում է «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, մասնավորապես՝ հայտնելով, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված «Ագրոմաշ Սնաբ» ՍՊԸ, «ՎԶԳՄ» ՍՊԸ և «ՌՈՒՍԵԿՍ ՊՈՐՏ» ՍՊԸ-ի արտադրողները չունեն հրավերով սահմանված «ՎՏԳ-90» մակնիշի բնութագրով ապրանքներ:

Անդրադառնալով Զարգարյան Արման Հովհաննեսի կողմից բողոքով վիճարկվող փաստին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունն իրականացնում է բողոքով ներկայացված ապացույցների և հիմնավորումների հիման վրա, ընդ որում՝ բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ ներկայացնելու պարտականությունը:

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Արման Հովհաննեսի Զարգարյանն օգտվելով իրեն՝ Օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք, սակայն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել բողոքով վիճարկվող փաստի վերաբերյալ որևէ վերաբերելի հիմնավորում: Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում

կայացնելը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ հաստատել կամ հերքել բողոքաբերի կողմից բողոքով վկայակոչված փաստի իրավաչափությունը, որն էլ հիմք կհանդիսանար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համար պարտավորեցնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կիրառելու Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը:

Միևնույն ժամանակ անդրադառնալով բողոքաբերի ներկայացուցչի կողմից բողոքով հրավիրված նիստի ընթացքում վկայակոչված հետևյալ հանգամանքին այն է՝ «*Երվադա» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված արտադրողներից՝ «ՌՈՒՍԵԿՍ ՊՈՐՏ» ՍՊԸ-ն չի արտադրում հրավերով պահանջվող «ՎՏԳ-90» մակնիշի բուլդոզերը, «ՎԶԳՄ» ՍՊԸ-ն արտադրում է այլ մակնիշի բուլդոզերներ, իսկ* ***«Ագրոմաշ Սնաբ» ՍՊԸ-ն արտադրում է հրավերով պահանջվող «ՎՏԳ-90» մակնիշի բուլդոզերը, սակայն ՀՀ-ում վերջինիս պաշտոնական ներկայացուցիչ է հանդիսանում «Սլացք» ՍՊԸ-ն***, ապա գտնում եմ, որ բողոքաբերի կողմից վկայակոչվածն ինքնին հերքում է բողոքով վիճարկվող փաստը, այն է՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված «Ագրոմաշ Սնաբ» ՍՊԸ-ն չի արտադրում Ընթացակարգի հրավերով պահանջվող «ՎՏԳ-90» մակնիշի բուլդոզերը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ Պատվիրատուն «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու համար չի կիրառել Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջը, արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջներ, դրանք են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքները և ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 67-րդ կետը, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն սույն մասով հայտնել է հետևյալը.

«*Արման Հովհաննեսի Զարգարյանի կողմից բողոքով նշվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընթացակարգին մասնակցած մյուս կազմակերպությունները Հավելված 1.1-ով ներկայացրել են «Երվադա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված նույն արտադրողին՝« ԱԳՐՈՄԱՇ ՍՆԱԲ» ՍՊԸ-ին, ուստի չէր կարող գնահատող հանձնաժողովի մոտ առաջանալ որևէ հիմնավոր կասկած՝ ստուգելու «Երվադա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկությունը:*

Միաժամանակ հայտնում եմ, որ «Երվադա» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պայմաններին, Պատվիրատուն առաջարկել է այդ տեխնիկական բնութագրով կնքել պայմանագիր և եթե պայմանագրի կատարման փուլում «Երվադա» ՍՊ ընկերության կողմից մատակարարվելիք ապրանքը չհամապատասխանի պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն կկիրառի ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված փույժ-փուգանքները՝ ընդհուպ մինչև պայմանագրի միակողմանի լուծում»:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջի կիրառումը գնահատող հանձնաժողովի կողմից պարտադիր պահանջ չէ, ընդ որում՝ Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը պատճառաբանված որոշման դեպքում, որը տվյալ պարագայում մասնակցի ներկայացրած տվյալների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկած չունենալու պայմաններում առկա չէ:

Վերը նշված փաստերով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերության բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Զարգարյան Արման Հովհաննեսի կողմից 25.10.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**